

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՌԵՎՏՐԻ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2010 թվականի սեպտեմբերի 21)

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում գտնվող Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով 2000 թվականի հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական համայնք հիմնելու մասին» պայմանագրի, 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Մաքսային միության Հանձնաժողովի մասին» պայմանագրի եւ 2008 թվականի դեկտեմբերի 12-ի «Մաքսային միության Հանձնաժողովի քարտուղարության մասին» համաձայնագրի վրա,

հիմնվելով «Միասնական մաքսային տարածք ստեղծելու եւ Մաքսային միություն ձեւավորելու մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի Պայմանագրի վրա,

կողմ հանդիսացող պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, Մաքսային միության միասնական մաքսային տարածքում արտաքին եւ փոխադարձ առեւտրի արդյունավետ կարգավորումն ապահովելու, տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ մաքսային, հարկային, տրանսպորտային եւ պետական հսկողության այլ ձեւեր իրականացնելու, տնտեսական ինտեգրման գործընթացներն ապահովելու, Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհրդի (Մաքսային միության գերագույն մարմնի) եւ Մաքսային միության Հանձնաժողովի արդյունավետ աշխատանքն ապահովելու նպատակներով,

գիտակցելով, որ այդ նպատակներին հասնելու համար որոշիչ է տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը Մաքսային միության ձեւավորման եւ գործունեության ընթացքում,

համաձայնեցին հետեւյալի մասին.

## **Հոդված 1**

Կողմերը ստեղծում եւ ապահովում են Մաքսային միության արտաքին ու փոխադարձ առեւտրի ինտեգրացված տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ Համակարգ) գործունեությունը, ինչպես նաեւ դրա զարգացումը:

## **Հոդված 2**

Սույն Համաձայնագրով սահմանվում են Համակարգը ստեղծելու, դրա գործունեության եւ զարգացման հիմքերը, Մաքսային միության Հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով), Հանձնաժողովի քարտուղարության (այսուհետ՝ Քարտուղարություն) եւ Կողմերի լիազորությունները՝ Համակարգը ստեղծելու հարցերով, ֆինանսավորման աղբյուրները եւ կարգը, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մատակարարների (կատարողների) ընտրության կարգը:

## **Հոդված 3**

Սույն Համաձայնագրում կիրառվում են հետեւյալ տերմինները եւ դրանց սահմանումները.

արտաքին եւ փոխադարձ առեւտրի տվյալների բազա՝ կանոնակարգված եւ փոխկապակցված տեղեկությունների ամբողջություն, որը կազմավորված է որոշակի կանոններին համապատասխան եւ համակարգված է այնպես, որ այդ տեղեկությունները հնարավոր լինի գտնել եւ մշակել էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգնությամբ (տվյալների բազա),

տեղեկատվության պաշտպանություն՝ իրավական, կազմակերպական եւ տեխնիկական համալիր միջոցներ, որոնք ուղղված են ապահովելու տեղեկատվության ամբողջականությունը (անփոփոխությունը), գաղտնիությունը, հասանելիությունը եւ պահպանությունը,

տեղեկատվություն՝ տեղեկություններ (հաղորդումներ, տվյալներ)՝ անկախ դրանց ներկայացնելու ձեւից,

տեղեկատվական համակարգ՝ տվյալների բազայում գետեղված տեղեկությունների եւ դրանց մշակումն ապահովող տեղեկատվական տեխնոլոգիաների ու տեխնիկական միջոցների ամբողջությունը,

տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ տեղեկություններ փնտրելու, հավաքագրելու, պահպանելու, մշակելու, տրամադրելու եւ տարածելու գործընթացները, մեթոդները, ինչպես նաեւ այդ գործընթացներն ու մեթոդներն իրականացնելու եղանակները,

տեղեկատվական ռեսուրսներ՝ տեղեկատվական համակարգերում գետեղված՝ փաստաթղթավորված տեղեկությունների համակարգված ամբողջություն,

ինտեգրացիոն հատված՝ տեղեկատվական համակարգ, որն ապահովում է Կողմ հանդիսացող պետությունների՝ արտաքին եւ փոխադարձ առեւտուրը կարգավորող պետական մարմինների տեղեկատվական ռեսուրսների ու տեղեկատվական համակարգերի, Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսների եւ տեղեկատվական համակարգերի տեղեկատվական փոխգործակցությունը:

#### **Հոդված 4**

Համակարգը Կողմ հանդիսացող պետությունների պետական ինտեգրացիոն հատվածների եւ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի կողմից միավորվող՝ ըստ տարածքների տեղաբաշխված պետական տեղեկատվական ռեսուրսների եւ Կողմ հանդիսացող պետությունների՝ արտաքին ու փոխադարձ առեւտուրը կարգավորող պետական մարմինների տեղեկատվական համակարգերի, Հանձնաժողովի տեղեկատվական համակարգերի եւ տեղեկատվական ռեսուրսների կազմակերպական ամբողջությունն է:

#### **Հոդված 5**

Հանձնաժողովն իրացնում է իր իրավունքները եւ որպես սեփականատեր իրականացնում է իր պարտականությունները Համակարգի այնպիսի բաղկացուցիչ մասերի նկատմամբ, ինչպիսիք Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածը, Հանձնաժողովի տեղեկատվական համակարգերը եւ տեղեկատվական ռեսուրսներն են:

## **Հոդված 6**

Քարտուղարությունը համակարգում է Համակարգը ձեւավորելու, դրա գործունեությունը եւ զարգացումն ապահովելու գործընթացները՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող փաստաթղթերին համապատասխան:

Համակարգի՝ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածում նշված բաղկացուցիչ մասերի ձեւավորման գործընթացում Քարտուղարությունն իրացնում է իր իրավունքները եւ իրականացնում է իր պարտականությունները որպես ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրատու՝ Քարտուղարության նստավայր հանդիսացող պետության՝ պետական կարիքների համար ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրում (գնումներ) իրականացնելու հարցերը կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

## **Հոդված 7**

Համակարգի ինտեգրացիոն հատվածների ձեւավորման, զարգացման եւ գործունեության ընթացքում կազմակերպական ու տեխնիկական հարցերով ընդունվող որոշումների միասնականացումն ապահովելու, տեղեկատվության պաշտպանության պատշաճ մակարդակը պահպանելու նպատակով՝ Քարտուղարությունը համակարգում է Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ տեխնիկական եւ կազմակերպական փաստաթղթերի նախագծերի մշակումը:

## **Հոդված 8**

Կողմերից յուրաքանչյուրը նշանակում է իր պետական ինտեգրացիոն հատվածի օպերատորին, որն իրացնում է իր իրավունքներն ու դրա ձեւավորման եւ դրա գործունեությունն ու զարգացումն ապահովելու առումով իրականացնում է իր պարտավորությունները:

## **Հոդված 9**

Քարտուղարությունը կազմակերպում է Համակարգի՝ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածում նշված բաղկացուցիչ մասերի նախագծումը, մշակումը, ներդնումը, աշխատանքի արդյունքների ընդունումը եւ հետագա ընթացքը՝ սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածում

նշված փաստաթղթերին համապատասխան, իսկ նշված փաստաթղթերով չկարգավորվող հարցերի առումով՝ Քարտուղարության նստավայր հանդիսացող պետության օրենսդրությանը համապատասխան:

Համակարգը մշակելու տեխնիկական առաջադրանքը համաձայնեցվում է Կողմերի միջև:

### **Հոդված 10**

Համակարգի՝ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածում նշված բաղկացուցիչ մասերի առումով՝ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվերներ (գնումներ) կատարելու եւ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելու դեպքում ներկայացված մրցույթային առաջարկների գնահատումը, ինչպես նաեւ այդ բաղկացուցիչ մասերի նախագծման եւ մշակման աշխատանքների արդյունքների ընդունումն իրականացվում է այն աշխատանքային մարմինների կողմից, որոնց կազմը հաստատվում է Հանձնաժողովի որոշմամբ՝ Քարտուղարության ներկայացմամբ:

### **Հոդված 11**

Համակարգի ձեւավորման եւ զարգացման աշխատանքներն իրականացվում են Քարտուղարության կողմից մշակվող եւ Հանձնաժողովի որոշմամբ հաստատվող ամենամյա պլանի հիման վրա:

### **Հոդված 12**

Համակարգի՝ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածում նշված բաղկացուցիչ մասերի ձեւավորման, զարգացման եւ գործունեության ապահովման առումով աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է Հանձնաժողովի ծախսերի նախահաշվարկով նախատեսված միջոցների հաշվին՝ Համակարգի ձեւավորման, զարգացման եւ գործունեության ապահովման ծախսերի՝ Հանձնաժողովի կողմից հաստատված նախահաշվարկին համապատասխան:

Կողմերի համաձայնությամբ՝ այդ աշխատանքների մի մասի ֆինանսավորումը կարող է իրականացվել Կողմ հանդիսացող պետությունների բյուջետային միջոցների հաշվին:

Պետական տեղեկատվական ռեսուրսների եւ Կողմ հանդիսացող պետությունների արտաքին ու փոխադարձ առեւտուրը կարգավորող պետական մարմինների տեղեկատվական համակարգերի, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետությունների պետական ինտեգրացիոն հատվածների ձեւավորման, զարգացման եւ գործունեության ապահովման առումով աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է Կողմ հանդիսացող պետությունների բյուջետային միջոցների հաշվին:

### **Հոդված 13**

Կողմերը հավասար օգտագործման իրավունքներ ունեն Համակարգի՝ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածում նշված բաղկացուցիչ մասերի նկատմամբ:

### **Հոդված 14**

Կողմերի համաձայնությամբ, սույն Համաձայնագրում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են սույն Համաձայնագրի՝ անբաժանելի մաս կազմող առանձին արձանագրություններով:

### **Հոդված 15**

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, խորհրդակցությունների եւ բանակցությունների անցկացման միջոցով:

Եթե վեճի կողմերը խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը՝ դրանց անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկի կողմից վեճի մյուս Կողմին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքը ներկայացնելու օրվանից հետո 6 ամսվա ընթացքում, ապա, վեճի կարգավորման այլ միջոցի վերաբերյալ կողմերի միջեւ պայմանավորվածության բացակայության դեպքում, վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հանձնաժողովը Կողմերին աջակցություն է ցուցաբերում վեճի կարգավորման հարցում՝ նախքան այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը հանձնելը:

## Հոդված 16

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման եւ ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմ հանդիսացող պետությունների կողմից կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի սեպտեմբերի 21-ին, մեկ բնօրինակից, ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

(ստորագրություններ)